ՀԱՄՄԻԿ ԵՍԱՅԱՆ

ՀԱՅԵՐԸ ԿԱԼԻՖՈՌՆԻԱՅՈՒՄ. ՆԵՐԳԱՂԹԻ ԱԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ 1880-1930-ԱԿԱՆ ԹԹ.

Բանալի բառեր *– Կալիֆոռնիա, վերաբնակիչներ, ներգաղթ, տեղաբաշխում, հայաբնակ ավաններ, տեղաշարժեր, տնտեսական ճգնաժամ*

Տասնամյակներ շարունակ՝ սկսած 1830-ական թվականներից, արևմտահայությունը Ամերիկայի Միացյալ Նահանգներ էր ներգաղթում երկրի արևելյան կողմով՝ հիմնականում Նյու Յորքի, մասամբ նաև Բոստոնի նավահանգիստներով: Երկրի արևելյան շրջանների քաղաքներում՝ Ուստր, Նյու Յորք, Բոստոն, Ֆիլադելֆիա և այլուր, աստիճանաբար ձևավորվում էին ԱՄՆ-ում առաջին հայ գաղութները, հիմնվում ազգային առաջին հիմնարկություններն ու կազմակերպությունները: Նման արագ զարգացող երկիր ներգաղթած հայերը, չունենալով մասնագիտական բավարար հմտություններ, որպես կանոն չտիրապետելով անգլերենին, ստիպված էին հիմնականում կատարել որակավորում չպահանջող, ծանր և ցածր վարձատրվող աշխատանք: «Ձանձրացած գործարաններու աշխատանքէն, յուսակտուր հայրենիք դառնալու փափաքէն՝ Հայ ժողովուրդը նոր տեղ մը, նոր գործ մը կը փնտռէ»[1],– գրում էր Բոստոնի «Կոչնակ» պարբերաթերթը:

Եվ ահա 1880-ական թթ. ընդհանուր հոսանքի հետ Կալիֆոռնիա, հատկապես Ֆրեզնոյի շրջան են ժամանում նաև երկրի արևելյան նահանգներում բնակություն հաստատած հայերը, որոնք մինչ այդ միջին հաշվով 5-10 տարի աշխատել էին երկրի արևելքի արդյունաբերական գործարաններում ու արհեստանոցներում: ԱՄՆ-ի արևելքից Կալիֆոռնիայի նահանգ եկած հայերը կարծում էին, թե այն առավել բարեկեցիկ, տնտեսապես ինքնուրույն կյանքի համար նպաստավոր բնակավայր է: Փաստորեն, այստեղ հաստատված առաջին հայերը ոչ թե անմիջապես Արևմտյան Հայաստանից ներգաղթածներն էին, այլ ԱՄՆ-ի արևելյան նահանգներում մինչ այդ բնակված, ամերիկյան իրականությանը որոշ չափով ծանոթ հայերը, այլ կերպ ասած՝ նրանք վերաբնակիչներ էին, որոնց հոսքը այս նահանգ շարունակվեց նաև հետագա տասնամյակներին. այդ երևույթը տեղի հայության առանձնահատուկ բնութագրերից էր:

1880-ական թթ. կեսերից վերաբնակիչներից զատ Կալիֆոռնիայում սկսում են հաստատվել նաև առաջին հայ ներգաղթողները, որոնք ժամանում էին

[1] «Կոչնակ», 1900, թիվ 2, էջ 14:

անմիջապես Արևմտյան Հայաստանից: Նրանց ոգևորում էին այստեղ հաստատված իրենց հայրենակիցների նամակները, որոնք պատմում էին այսպես կոչված «դրախտի» գեղեցկությունների ու առավելությունների՝ հրաշալի բնության և կլիմայի, այգեգործության և ընդհանրապես գյուղատնտեսության մեջ հաջողության հասնելու հնարավորությունների մասին: Եթե մի կողմ թողնենք այդ նամակներում տեղ գտած պարզունակ չափազանցությունները (նավի մեծության ձմերուկներ, ձվի մեծության խաղողներ, 9-10 ֆունտանոց սմբուկներ և այլն[1]), ապա կասկածից վեր է դրանց մեծ ազդեցությունը արևմտահայերի վրա, որոնք ուղղակի կամ անուղղակի կապված էին հողագործությանը: Այդ նամակներն իրենց առաջին արդյունքը տվեցին 1883 թ. սեպտեմբեր-նոյեմբերին, երբ Մարզվանից, այնուհետև Յոզկաթից Կալիֆոռնիա գաղթեցին շուրջ 60 հայեր, որոնց մեծ մասը ավետարանական (բողոքական) էր: Բնական է, որ նրանց հիմնական մասը (36 անձ) ձգտում էր հաստատվել հենց Ֆրեզնոյի շրջանում՝ արգավանդ Սան Վոքին հովտում: Ահա այսպես Ֆրեզնոն եղավ հայերի առաջին հանգրվանը ԱՄՆ-ի արևմուտքում: Եթե 1890 թ. Ֆրեզնոյում բնակվում էր 165 հայ[2], ապա չորս տարի անց՝ նրանց թիվը հասնում է 360-ի[3]:

Այդ տարիներին հայերի մշտապես աճող արտագաղթը Արևմտյան Հայաստանից, Հայկական Կիլիկիայից և Օսմանյան կայսրության այլ շրջաններից հետևանք էր նրանց հանդեպ թուրքական իշխանությունների բռնաճնշումների: Բեռլինի 1878 թ. վեհաժողովից հետո, երբ Բարձր դուռը պարտավորվել էր բարենորոգումներ իրականացնել հայկական բնակավայրերում, «Աբդուլ Համիդ II-ը որոշեց վերջ տալ Հայկական հարցին՝ ուժեղացնելով հայ բնակչության հալածանքը (մահմեդական մոլեռանդության և հակահայկական տրամադրությունների բորբոքում, մշտական սպանություններ և թալան, տեղական իշխանությունների կամայականություն և անօրինություն, հայերի բռնի մահմեդականացման փորձեր, գրաքննության սաստկացում, քրդական անկանոն հեծելազորի ստեղծում և այլն)….»[4]: Բռնաճնշումների թիրախ էին դարձել հատկապես արևմտահայ ազգային ազատագրական կազմակերպությունները: Այսպես, օրինակ՝ 1886 թ. Ֆրեզնո է գաղթում «Պաշտպան հայրենյաց»-ի առաջնորդներից մեկը՝ Կարապետ Նշիկյանը:

Իսկ արդեն 1894-1896 թթ. Աբդուլ Համիդ II-ը նույն նպատակով ձեռնամուխ է լինում Հայոց ցեղասպանության իրականացմանը Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում: Ռուբեն Սաֆ-

---

[1] Տե՛ս **Mirak R.**, Torn between Two Lands: Armenians in America 1890 to World War I, Cambridge (Massachusetts), 1983, p. 112:

[2] Տե՛ս **Kooshian G. B.**, The Armenian Immigrant Community of California: 1880-1935. A dissertation, Los Angeles, 2002, p. 41:

[3] Տե՛ս **Wallis W. D.**, Fresno Armenians (to 1919), Lawrence, 1965, p. 36:

[4] Հայկական հարց: Հանրագիտարան, Երևան, 1996, էջ 233:

բաստյանը գրում է. «Առաջին հակահայկական ցեղասպանական բնույթի ծրագիրը ստեղծվեց 19-րդ դարի 90-ականների կեսերին: Նրա իրականացումը հանգեցրեց Օսմանյան կայսրության հայ ազգաբնակչության զանգվածային կոտորածների, որոնց զոհ գնացին շուրջ 300 հազար մարդ»[1]: Թուրքական իշխանությունների այսօրինակ քաղաքականությունը խթանեց հայերի արտագաղթը: Ինչպես տարիներ անց գրում էր ամերիկահայ հայտնի ազգային գործիչ Գրիգոր Սարաֆյանը, այն «… նորանոր անհատներուն Ամերիկա գաղթելուն առիթ կուտայ, եւ որով կը բազմանայ Գալիֆորնիոյ հայութեան թիւը թէ՛ ուղղակի հայրենիքէն եւ թէ՛ միանգամայն Ամերիկայի արեւելեան նահանգներէն եկած նորեկներուն պատճառաւ»[2]:

Կարևոր է նշել, որ այդ տարիներին Կալիֆոռնիայի մասին լուրերը՝ հաճախ նաև առասպելական, այնպես էին տարածվել, որ որոշ թվով հայեր ուղևորվում էին ոչ թե ԱՄՆ-ի արևելյան նահանգներ, ինչպես նախկինում, այլ միանգամից արևմուտք՝ Կալիֆոռնիա: Ամերիկացի սոցիոլոգ Լա Պիեռի ուսումնասիրության համաձայն՝ 1898-1904 թթ. տարբեր երկրների նավահանգիստներից Կալիֆոռնիա են ժամանել 158 հայեր[3]: Հատկանշական է, որ թեև այդ հայերը նահանգ էին մուտք գործում Սան Ֆրանցիսկոյի նավահանգստով, այնուամենայնիվ նպատակ ունեին հաստատվելու Ֆրեզնոյում:

Քանի որ սույն հոդվածում հաճախ ենք անդրադառնալու Կալիֆոռնիայի հայերի թվաքանակին, հարկ է պարզաբանել հետևյալը: Գաղթաշխարհի հայության թվաքանակի վերաբերյալ տեղեկությունները հիմնականում մոտավոր են: Հայերը հաճախ ուռճացնում են իրենց թվաքանակը, ինչը հատուկ է փոքրաթիվ ժողովուրդներին և ազգային փոքրամասնություններին: Ամերիկահայերը ևս բացառություն չեն. հայկական տարբեր պարբերականներ, կազմակերպություններ, հայազգի հեղինակներ հակասական, նաև չափազանցված տվյալներ են հաղորդում նույնիսկ մեկ քաղաքում, ինչպես նաև տվյալ երկրում ապրող հայերի մասին: Մյուս կողմից, լիարժեք չեն ընդունող երկրի, այս դեպքում՝ ԱՄՆ-ի մարդահամարների և պետական տարբեր հիմնարկությունների տվյալները, որի պատճառները մանրամասն քննարկվել են «ԱՄՆ էթնիկ խմբեր. Հարվարդի հանրագիտարան»-ի համապատասխան հոդվածում[4]: Ամերիկահայ պատմաբան Չարլզ Մահաքյանը, դեռևս 1930-ական թթ. անդրադառնալով Կալիֆոռնիայի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ մարդահամարների տվյալներին, նշում էր. «… բազմաթիվ հա-

---

[1] **Սաֆրաստյան Ռ.**, Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Երևան, 2009, էջ 167-168:

[2] **Սարաֆեան Գ.**, Գործապատում ՀԲԸ միութեան Գալիֆորնիոյ շրջանակի, Ֆրէզնօ, 1954, էջ 3:

[3] Տե՛ս **Tracy LaPiere R.**, The Armenian Colony of Fresno: A Socio-Psychological Study of Prejudice (Unpublished Ph. D. dissertation, Department of Sociology), Stanford University, 1930, p. 159:

[4] Տե՛ս **Price Charles A.**, Methods of Estimating the Size of Groups // «Harvard Encyclopedia of American Ethnic Groups», Cambridge, London, 1981, p. 1033-1044:

յեր, որոնց ծնողները ծնվել էին ԱՄՆ-ում, մարդահամարի ժամանակ չէին արձանագրվում իբրև հայ, իսկ մի զգալի մասը հավանաբար թաքցնում էր իր ազգային պատկանելությունը»[1]: Հարկ է նկատել, որ Կենտրոնական Կալիֆոռնիայի հայության դեպքում ազգային պատկանելությունը թաքցնելը անմիջական հետևանքն էր տեղացիների կողմից ազգային խտրականության. ներկայանալով որպես ամերիկացի և անվանափոխ լինելով՝ հայերը փորձում էին զերծ մնալ համատարած այն տաբուներից, որոնք առկա էին հասարակական, սոցիալական և իրավական ոլորտներում:

Ըստ մեր հետազոտության՝ հայերի (և ոչ միայն նրանց) պարագայում կար ևս մեկ հանգամանք, որը մարդահամարի տվյալները դարձնում էր ոչ լիարժեք: 1910 թ. և հաջորդ մի քանի մարդահամարների ժամանակ ազգային պատկանելությունը որոշվում էր ըստ մայրենի լեզվի (mother tongue)[*]: Եվ քանի որ Արևմտյան Հայաստանից ու Կիլիկիայից Կալիֆոռնիա ներգաղթած հայերի մի զգալի մասը հայերեն չգիտեր ու հաղորդակցվում էր թուրքերենով, դասվում էր թուրքերի շարքը: Իսկ արդեն Միացյալ Նահանգներում ծնված կամ մեծացած սերնդի համար «մայրենի լեզուն» շատ անգամ հենց անգլերենն էր: Այդպիսով, եթե 1899-1914 թթ. ԱՄՆ ներգաղթի հանձնաժողովի (U.S. Immigration Commission) տվյալներով՝ երկիր էր ներգաղթել 51 950 հայ[2], ապա վեց տարի անց՝ 1920 թ., մարդահամարը, կիրառելով «մայրենի լեզվի» ցուցիչը, ԱՄՆ-ում արձանագրում էր ընդամենը 37 647 հայ[3]: Ըստ այդմ՝ որպես կանոն, մի դեպքում թվային տվյալները չափազանցված են, մյուս դեպքում՝ նվազեցված. այդ իսկ պատճառով շատ անգամ դժվար է որոշել հայ բնակչության ճշգրիտ թվաքանակը այս կամ այն քաղաքում, նահանգում կամ ԱՄՆ-ում ընդհանրապես:

Ըստ 1901 թ. Ֆրեզնոյի շրջանի պաշտոնական տվյալների (Fresno County Directory)՝ այստեղ արդեն ապրում էր շուրջ 1000 հայ[4]: Թորոս Խնկյանի վիճակագրության համաձայն՝ հետագա հինգ տարիներին այդ թիվը աճում է ավելի քան երկու անգամ՝ 1906 թ. հասնելով 2326-ի[5]: Ընդ որում՝ հայության

---

[1] **Mahakian Ch**., History of the Armenians in California. A Thesis. University of California, California, 1935, p. 14.

[*] Մինչ այդ երկար տարիներ Օսմանյան կայսրությունից ԱՄՆ ներգաղթող հայերը դասակարգվում էին ըստ ծննդավայրի, ինչպես, օրինակ՝ Եվրոպական Թուրքիայից կամ Ասիական Թուրքիայից եկածներ:

[2] Տե՛ս **Mirak R**., նշվ. աշխ., էջ 293:

[3] Տե՛ս Mother Tongue of the Foreign-Born Population: 1910 to 1940, 1960, and 1970 // http://www.census. gov/population/www/documentation/twps0029/tab06.html (մուտք՝ 05.08.2019):

[4] Տե՛ս **Tracy LaPiere R**., նշվ. աշխ., էջ 159:

[5] Տե՛ս **Խնկեան Թ. Պ**., Պատմութիւն Քալիֆորնիոյ հայոց // «Ասպարէզ», ժողովածու տասնամեակի առթիւ (1908-1918), Ֆրէզնօ, 1918 էջ 306: Հետագայում Խնկյանի այս վիճակագրությունից օգտվել են Մուշեղ եպիսկոպոս Սերոբյանը և Լա Պիեռը, թեև վերջինս, հղելով Խնկյանին, թյուրիմացաբար նշում է 2771 (**Tracy LaPiere R**., նշվ. աշխ., էջ 160):

հոսքը առավել մեծ էր Խարբերդից[1] (676), Բաղեշից (326), Կարինից (205), Տիգրանակերտից (158), Մուշից (147), Մարզվանից (137). մյուս վայրերից եկածների թիվը չէր գերազանցում 90-ը: Ինչպես հաղորդում է Ա. Կ. Սեքլեմյանը՝ «Թիւրքիոյ գրեթէ ամէն գաւառ ու գլխաւոր քաղաք իր ներկայացուցիչը ունի Ֆրէզնոյի հայ գաղութին մէջ»[2]:

Մինչև 1900-ական թվականների սկիզբը Կալիֆոռնիայի հայերը կենտրոնացած էին Ֆրեզնո քաղաքում և նրա շուրջը: Սակայն ներգաղթի նոր ալիքների առաջացումով աճում է նաև Սան Վոքին հովտի և սահմանամերձ շրջանների հայության թիվը: Այսպես, Ֆրեզնոյի շրջանում հայերը հաստատվում են՝ Ֆաուլեր, Սելմա, Քինգսբուրգ, Փարլիեր, Ռիդլի, Սանգեր, Օլիանդեր, Սենտերվիլ, Դել Ռեյ, Վատոկի, Թուլարիի շրջանում (արևմտահայ գրականության մեջ՝ Թուլարա)՝ Վայսալիա, Դինուբա, Թուլարի, Եդեմ, Քատլեր, Սեվիլ, Ստանիսլաուսի շրջանում՝ Թըրլոկ, Մոդեստո և այլ բնակավայրերում: Այդ ժամանակ դրանք հիմնականում փոքր և միջին գյուղական ավաններ էին (town կամ township): Այսպես, օրինակ՝ 1910 և 1920 թվականներին Ֆաուլերի բնակչությունը կազմում էր համապատասխանաբար 675 և 1528, Քինգսբուրգինը՝ 634 և 1316, առավել շատ բնակիչ ունեին Թուլարին՝ 2758 և 3539, Սելման՝ 1750 և 3158, Դինուբան՝ 970 և 3400, սակայն կային նաև այնպիսիք, որոնք ընդհանրապես չէին նշվել մարդահամարի ցուցակներում (օրինակ՝ Եդեմը)[3]: Հարկ է նկատել, որ նույն այդ տարիներին հայկական որոշ սկզբնաղբյուրների տվյալները նշված բնակավայրերի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ թվում են չափազանցված: Ըստ դրանց, օրինակ՝ 1912 թ. Ֆաուլերի միայն հայ բնակչության թիվը եղել է շուրջ 500, իսկ 1922-ին՝ 1600[4]: Սա միակ օրինակը չէ իր տեսակի մեջ, և ցավոք ամերիկացի ու ամերիկահայ ուսումնասիրողները անհրաժեշտ չափով չեն անդրադարձել խնդրին, երբեմն էլ պարզապես շրջանցել են այն:

Թվարկված բնակավայրերում հաստատվում էին և՛ Ֆրեզնո քաղաքից եկած հայերը, և՛ Կալիֆոռնիա ներգաղթող նորեկները, որոնց համար հատկապես կարևոր էր հողատարածք ձեռք բերելը: Ուշագրավ է, որ այդ տարիներին հայերի շրջանում հղանում է Սան Վոքին հովտում «զուտ հայաբնակ գաղութներ» հիմնելու գաղափարը: Ֆրեզնոյում անգամ կազմվում է հանձնախումբ, որը պետք է զբաղվեր հողատարածքներ գնելու հարցերով: Սակայն գործը գլուխ է բերվում միայն Եդեմում: Ընդամենը մի քանի տարում

---

[1] Խարբերդից եկածների շարքում, ըստ Վ. Վոլիսի, կային նաև ասորացած հայեր (**Wallis W. D.**, նշվ. աշխ., էջ 38):

[2] «Ասպարէզ», 1909, թիվ 57, էջ 1:

[3] Տե՛ս 1850-2010 Historical US Census Populations of Counties and Incoporated Cities, Towns in California // http://www.dof.ca.gov/research/demographic/state_census_data_center/historical_census_1850-2010/ view.php (մուտք՝ 23.08.2019):

[4] Տե՛ս «Ոսկեմատեան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան. արծաթեայ յոբելեան 1906-1931», Բարիզ, 1935, հ. Ա, էջ 391:

հայերն այստեղ գնում են մեծ հողատարածքներ ու ստեղծում զուտ հայաբնակ ավան (ի սկզբանե Լոուել կոչվող այդ վայրում ապրում էին սակավաթիվ ամերիկացի ընտանիքներ): Ավելին, ԱՄՆ-ի փոստային դեպարտամենտը (United States Post Office Department), ընդառաջ գնալով ավանի հայ բնակչության խնդրանքին, այն վերանվանում է «Եդեմ» (Yettem)[1]: 1910 թ. Եդեմի՝ գրեթե ամբողջությամբ հայազգի բնակչությունը կազմում էր շուրջ 300 մարդ և շարունակում էր աճել հաջորդ տարիներին ևս: Սակայն 1920-ականների սկզբին տնտեսական ճգնաժամի հետևանքով հայերը ստիպված եղան հեռանալ այստեղից. արդեն 1930-ականներին Եդեմում ապրում էր ընդամենը տասը տուն հայ[2]: Այդուհանդերձ Եդեմը՝ որպես հայկական բնակավայր, ԱՄՆ-ի հայության պատմության մեջ մնաց որպես եզակի երևույթ:

1900-ականների սկզբին Կալիֆոռնիա են սկսում ներգաղթել նաև Ռուսական կայսրությունից՝ Արևելյան Հայաստանից: Առաջինը Կարսի մարզի Կարակալա (Ղարաղալա) գյուղի բնակչիներն էին: XIX դ. վերջին, ինչպես հայտնի է, հայ ավետարանական (բողոքական) շարժման տարածումը, ինչպես մինչ այդ Արևմտյան Հայաստանում, այնպես էլ Արևելյան Հայաստանում հանգեցրեց Հայ առաքելական եկեղեցու կողմից ավետարանականների հանդեպ հալածանքների հատկապես Ալեքսանդրապոլում, Կարսում և շրջակա գյուղերում[3]: Ստեղծված իրավիճակում տեղի հայ ավետարանականները ստիպված էին դիմել իշխանությունների օգնությանը: Այսպես, 1881 թ. հոկտեմբերին ալեքսանդրապոլցի հայ ավետարանական 29 ընտանիքներ խնդրագիր են ուղարկում Կովկասի ռազմաքաղաքացիական վարչության (Кавказское военно-народное управление) պետ, գեներալ-լեյտենանտ Կոմարովին. նկարագրելով իրենց կրած զրկանքներն ու հալածանքները՝ նրանք խնդրում են որպես բնակության վայր իրենց հատկացնել Կարսի մարզի քիչ բնակեցված գյուղերից մեկը[4]: Իշխանությունների արտոնությամբ՝ հայ ավետարանականներին տրամադրվում է Կարակալա գյուղը, որտեղ 1882 թ. արդեն հաստատվել էին «48 տուն հայեր, որոնց մեջ կային ավետարանական-լյութերականներ, հունադավաններ, բապտիստներ (մկրտականներ)»[5]: Ըստ որոշ սկզբնաղբյուրների՝ այստեղ էին հաստատվել նաև ռուս աղանդավորները, ինչպես, օրինակ՝ դուխոբորները, մոլոկաններն ու պրիգունները: Վերջինների ուսմունքի հետևորդն էին դարձել որոշ թվով հայեր:

Ա. Կլիբանովը հետևյալ կերպ է բացատրում Կարակալայից արտագաղ-

---

[1] **Davidian Ch**., A warm wind through Yettem (an eighty-year anthrology) // www.putnampit.com/yettem.PDF (մուտք՝ 24.07.2019):

[2] Տե՛ս «Ոսկեմատեան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան», էջ 390:

[3] Տե՛ս **Ղազարյան Ա., Լևոնյան Ռ. Ն**., Հայաստանյայց ավետարանական եկեղեցի (Հայաստան-Կովկաս), Երևան, 1999, էջ 70-72, 121-123:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 269, ց. 2, գ. 3087, թ. 1-4:

[5] **Ղազարյան Ա., Լևոնյան Ռ. Ն**., նշվ. աշխ., էջ 124:

թը: XIX դարի վերջին-XX դարի սկզբին պրիգունների շրջանում պայքար էր ձևավորվել բարձր ու ցածր խավերի միջև: Ի տարբերություն բարձր խավի՝ մյուսները (հողագործներ, անասնապահներ ու արհեստավորներ) ոչ միայն չէին հեռացել իրենց ուսմունքից և հին ավանդույթներից, այլև բացեիբաց մերժում էին զինվորական ծառայությունը: Կառավարության հետ անընդհատ հակասությունների պատճառով նրանք սկսում են արտագաղթել Ռուսական կայսրությունից (նրանց թվում կային նաև որոշ մոլոկաններ). «1901-1911 թթ. ավելի քան 3500 պրիգուններ ներգաղթեցին Կալիֆոռնիա: Արտագաղթում էին հիմնականում Կարսի մարզից, Երևանի նահանգից և Անդրկասպյան մարզից»[1]:

Թեև հեղինակը չի հիշատակում հայերի մասին, այդուհանդերձ հասկանալի է, որ պրիգունների մեջ կային հայ ընտանիքներ: Այդ մասին է վկայում «Ասպարեզ»-ը դեռևս 1913 թվականին. «Մօլօկաններու գաղթը խումբերով սկսուեցաւ 1898էն որոնց սկսեցին ընկերանալ նաև հատ հատ հայեր, ապա սկսեցին ինքնաբերաբար գաղթել ամբողջ հայ ընտանիքներ»[2] (թերթը հաճախ չի զանազանում պրիգուններին մոլոկաններից, թեև օգտագործում է «հայ պրիգուն» արտահայտությունը):

Արդեն մեր օրերում ամերիկացի հետազոտող Ջ. Քեոսաբաբյան-Բիվինը գրում է՝ զինվորական ծառայությունից խուսափելու համար, ինչպես նաև ԱՄՆ-ում աշխատանք գտնելու և կրոնական ազատություն ձեռք բերելու հույսով 1905-1912 թթ. Ռուսական կայսրությունից շուրջ 2500 «հոգևոր քրիստոնյաներ» («духовные христиане» – Ռուսական կայսրությունում այսպես էին անվանում աղանդավորներին, ինչպես նաև մոլոկանական աղանդին հարողներին), որոնց թվում՝ հայ պրիգուններ (հիմնականում Կարսից), գաղթել են Միացյալ Նահանգներ: Նույն այդ տարիներին Կարակալայից ԱՄՆ էին ներգաղթել նաև Ջոյս Բիվինի պապը՝ Զոհրաբ Քեոսաբաբյանը, և վերջինիս եղբայրը՝ Հովհաննես Քեոսաբաբյանը[3]:

Այդպես, Կարակալայի բնակիչների արտագաղթից հետո որոշ ժամանակ անց Միացյալ Նահանգներում և հատկապես Կալիֆոռնիայում հաստատվելու մոլուցքը տարածվեց ամբողջ Շիրակում: Եվ քանի որ այս անգամ արդեն արտագաղթի պատճառը առավելապես տնտեսական էր, ապա երկրից գնում էին թե՛ Հայ առաքելական և թե՛ Հայ ավետարանական եկեղեցիների հետևորդները: Եթե աղանդավորները արտագաղթում էին ընտանիքներով, ամբողջ ունեցվածքով, ապա Ալեքսանդրապոլից ու շրջակա գյուղերից՝ Արդիկից (այժմ՝ Արթիկ), Ղարաքիլիսայից (այժմ՝ Լեռնապատ), Դուզքենդից,

---

[1] Տե՛ս **Клибанов А. И**., История религиозного сектантства в России (60-е годы XIX в.-1917 г.), Москва, 1965, с. 145:

[2] «Ասպարէզ», 1913, թիվ 254 էջ 1:

[3] Տե՛ս **Keosababian-Bivin, Conovaloff A**., Karakala // http://www.molokane.org/Armenian_Jumpers/Karakala.htm (մուտք՝ 20.08.2019):

Ղազարաբաղից (այժմ՝ Իսահակյան), Հոռոմից, ինչպես նաև Կարսի մարզից՝ Փիրվալիից, Աղուզումից, Ղարաբաղից ու այլ վայրերից մեկնողները երիտասարդ պանդուխտներ էին, որոնք հայրենի գյուղերում թողնում էին իրենց ընտանիքներն ու մեկնում Միացյալ Նահանգներ՝ գումար վաստակելու: Ինչպես Արևմտյան Հայաստանի բնակիչների, այնպես էլ այս դեպքում արտագաղթել ցանկացողների համար շատ ոգևորիչ էին մինչ այդ արդեն ԱՄՆ ներգաղթածների նամակները, որոնք նկարագրում էին «դրամ վաստակելու դիւրին պայմանները»: «Պատմական Շիրակի գիւղերուն,– մտահոգությամբ գրում է «Ասպարեզ»-ը,– այսօր ամայանալու վտանգ կը սպառնայ: Հայաստանի այդ նշանաւոր մասը… այսօր տնտեսական այնպիսի պայմաններուն մէջ յայտնուած է, որ ժողովուրդը ստիպուած է օտարութեան մէջ փնտռել իր ապրուստը: Անշուշտ Կովկասի կամ Ռուսաստանի մէջ գործարանային-արդիւնաբերական պայմանները ծայր աստիճան անկման հասած ըլլալու են, որ Կովկասահայ գիւղացիութիւնը իր վարձկան բազուկները այս հեռաւոր շուկային մէջ վաճառքի հանելու կ'ուզայ»[1]:

Նույն թերթը տալիս է արևելահայերի՝ ԱՄՆ ներգաղթի ամփոփ տվյալները, ըստ որոնց՝ «1900-1905ին 50 անձ, 1905-1910ին 300 անձ, 1910-1913ին 1200 անձ»[2] հաստատվել էր այստեղ՝ գերազանցապես Լոս Անջելեսում: 1912 թ. միայն Լոս Անջելեսի շրջանում բնակվում էր 520 արևելահայ[3]՝ շրջանի ընդհանուր հայ բնակչության շուրջ կեսը: Որոշ թվով հայեր իրենց նոր տներն էին գտնում նաև Կալիֆոռնիայի այլ շրջաններում, օրինակ՝ Ֆրեզնոյում, որտեղ ապրող ալեքսանդրապոլցի ընտանիքների մասին է վկայում «Հայրենիք» ամսագիրը[4]:

Բոլոր դեպքերում հստակ է, որ արևելահայերի ներգաղթը Կալիֆոռնիա քանակապես զիջել է արևմտահայերի ներգաղթին և համեմատաբար մեծ չափերի է հասել հատկապես 1910-1914 թթ., որից հետո՝ Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելու հետևանքով, գրեթե դադարել է. ոչ մեծ թվով ռուսահայեր ներգաղթել են ԱՄՆ 1917 թ.՝ ռուսական երկու հեղափոխություններից հետո:

Վերադառնանք արևմտահայության ներգաղթի ընթացքին: 1908 թ. հուլիսի 24-ին Օսմանյան կայսրության նոր իշխանությունները՝ երիտթուրքերը, վերահաստատեցին 1876 թ. սահմանադրությունը. «Սահմանադրությունը հանդիսավոր կերպով հրապարակում էր առանց դավանանքի խտրության

---

[1] «Ասպարէզ», 1913, թիվ 255, էջ 1:

[2] Տե՛ս նույն տեղում: Ռ. Միրաքը, մեջբերելով այս տվյալները, նշում է նաև, որ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը արևելահայության թիվը ԱՄՆ-ում եղել է շուրջ 2500 (**Mirak R.**, նշվ. աշխ., էջ 58):

[3] Տե՛ս **Մուշեղ Եպիսկոպոս**, Գալիֆորնիոյ գաղութը // «Ամերիկահայ տարեցոյց», Ա տարի, 1912, էջ 73:

[4] Տե՛ս «Հայրենիք», 1924, թիվ 3, էջ 43:

կայսրության բոլոր հպատակների անձնական ազատության և հավասարության, սեփականության անվտանգության և բնակարանի անձեռնմխելիության, հարկերի համամասնական գանձման, կոռի, բռնագրավման և տուգանքների արգելման սկզբունքը»[1]: Ուստի հռչակված բարեփոխումները ոգևորություն ու խանդավառություն արթնացրին արևմտահայության շրջանում: Այս պայմաններում Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր կողմերից արտագաղթը նվազեց: 1908 թ. «Ասպարեզ»-ի տեղեկությունների համաձայն՝ Արևմտյան Հայաստանից Կալիֆոռնիա էին տեղափոխվում միայն կանայք ու երեխաներ, որոնց ամուսինները և հայրերը մինչ այդ արդեն բնակվում էին նահանգում: Ավելին, տեղի էր ունենում նաև հակառակ գործընթացը. որոշ թվով հայեր, որոնք Ֆրեզնոյում չունեին ընտանիք, սեփականություն, վերադառնում էին հայրենիք[2]:

Սակայն, ինչպես հայտնի է, երիտթուրքերի «Ազատություն, հավասարություն, եղբայրություն» կարգախոսը արագորեն փոխարինվեց պանթուրքիզմի քաղաքականությամբ[3]: Արդեն 1909 թ. ապրիլին երիտթուրքերը Ադանայում իրականացրին հայ բնակչության կոտորածը, ինչի հետևանքով վերսկսվեց հայերի արտագաղթը նաև Միացյալ Նահանգներ և շարունակվեց մինչև Առաջին համաշխարհային պատերազմը: Ավելացնենք նաև, որ 1909 թ. սեպտեմբերին թուրքական կառավարությունը որոշում կայացրեց զորակոչելու կայսրության քրիստոնյա բնակիչներին, այդ թվում՝ հայերին: Զինվորական ծառայությունից խուսափելու միակ ելքը 50 օսմանյան ոսկի վճարելն էր, ինչը այդ ժամանակաշրջանում մեծ գումար էր: Ցեղասպանությունը վերապրած Սուրեն Փափազյանի վկայությամբ՝ անգամ լավ հողագործներն ու առևտրականները մեկ տարում դժվարությամբ էին այդքան վաստակում: Եվ որպեսզի իրենց զավակներին չուղարկեն թուրքական բանակ, հայերը պարտք էին վերցնում, այնուհետև գաղթում ԱՄՆ՝ պարտքը վերադարձնելու համար: Երբեմն հայ երիտասարդները գաղտնի անցնում էին Կովկաս, որտեղից ԱՄՆ մեկնելը դյուրին էր դառնում[4]:

Այդ տարիներին Արևմտյան Հայաստանից արտագաղթը նոր թափ ստացավ Բալկանյան երկու պատերազմների (1912 թ. սեպտեմբեր-1913 թ. օգոստոս) հետևանքով: Բացի քրդերի և թուրքերի պարբերական կողոպուտներից ու հարձակումներից՝ հայ գյուղացիությանը սպասում էին նոր զրկանքներ, ինչպես, օրինակ՝ թուրքական բանակի կարիքները հոգալու համար իրենց անասունների անհատույց բռնագրավումը: Շատ ավելի ծանր հետևանքներ ունեցավ այն, որ պատերազմներում կրած պարտություններից հետո Բալկաններից գաղթած հարյուր հազարավոր թուրքեր բնակվեցին երկրի արևել-

---

[1] **Բայբուրդյան Վ. Ա.**, Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011, էջ 529:

[2] Տե՛ս «Ասպարէզ», 1908, թիվ 6, էջ 1:

[3] Մանրամասն տե՛ս **Սաֆրաստյան Ռ.**, նշվ. աշխ., էջ 168:

[4] Տե՛ս **Փափազեան Ս. Ա.**, Վերապրողի մը ոդիսականը, Երևան, 2000, էջ 72:

յան շրջաններում՝ հատկապես Արևմտյան Հայաստանում, որտեղ նրանք իրենց վրեժը սկսեցին լուծել տեղի հայ բնակչությունից: Եվրոպական տարածքներից հետո նաև արևելյան շրջանների՝ Արևմտյան Հայաստանի հնարավոր կորստի վտանգը, ինչպես նշում է Հ. Սիմոնյանը, առաջ բերեց «հայ ժողովրդին սեփական հայրենիքից դուրս մղելու կամ տեղում ոչնչացնելու գաղափարը»[1]: Նույնիսկ համիդյան ամենածանր շրջանում արևմտահայության արտագաղթը այնքան մեծ ծավալ չուներ, որքան այդ տարիներին: Անդրադառնալով այդ հարցին՝ Էդ. Մելքոնյանը ուշագրավ հատված է մեջբերում հայտնի ազգային գործիչ Միքայել Նաթանյանի 1913 թ. մի հոդվածից. «Վերջերս լոկ Քէսապի եւ Ճիսրի վիճակները ըրած այցելութեամբս կրցայ հաստատել, արդարեւ որ միայն Քէսապէն (մոտ 800 տուն) 7-800 երիտասարդներ այժմ Ամերիկա կը գտնուին եւ այս թիւը ամէն օր կ'աւելանայ: Գացողներէն դարձող չկա այժմ…. Գիւղերու մէջ աշխատութեան եւ գործի ընդունակ մարդ եւ երիտասարդ չի մնար այլեւս….»[2]: Իր հերթին ամերիկահայ մամուլը տագնապով արձանագրում էր. «Հայերու Քալիֆօրնիա գալը մեծ համեմատութիւններ առած է վերջերս: Կուգան ամէն կողմերէ թէ՛ Մ. Նահանգներէ և թէ՛ երկրէն: Կուգան անհաշիւ ու տարերային կերպով… Շատերը կը ծախեն տուն ու հաստատուած գործը ու կուգան: Ուրիշներ առանց դրամի կուգան»[3]:

Ըստ Լա Պիեռի՝ 1910-1915 թթ. ավելի քան 300 հայ ներգաղթեց Կալիֆոռնիա ուղիղ Արևմտյան Հայաստանից[4]:

Մուշեղ եպիսկոպոս Սերոբյանի վիճակագրության համաձայն՝ 1912 թ. Կալիֆոռնիայում ապրում էր 6925 հայ, որոնց գերակշիռ մասը՝ 4500-ը՝ Ֆրեզնոյի շրջանում: Հարկ է նկատել, որ, ըստ Լա Պիեռի բերած տվյալների, 1910 թ. պաշտոնական մարդահամարը Կալիֆոռնիայում արձանագրել էր շուրջ 4500 հայ, որոնցից առնվազն 3790-ը բնակվում էր Ֆրեզնոյի շրջանում՝ կազմելով շրջանի 75 000 բնակչության 5%-ը[5]: Թվում է՝ Մուշեղ եպիսկոպոսի բերած թվերը մոտ են իրականությանը, եթե նկատի առնենք մի կողմից՝ հայերի մշտական հոսքը նահանգ և նրանց թվաքանակի բնականոն աճը, մյուս կողմից՝ այն, որ «ամերիկյան» տվյալները չէին արձանագրում ամբողջ հայ բնակչությունը: Խմբավորելով Մուշեղ եպիսկոպոսի տվյալները (Աղյուսակ I)՝ պարզ է դառնում, որ նահանգի կենտրոնում գտնվող ավանդաբար հայաշատ բնակավայրերի (Ֆրեզնո, Ֆաուլեր, Թուլարի, Եդեմ) կողքին զգա-

---

[1] **Սիմոնյան Հ.**, 1912-1913 թթ. Բալկանյան պատերազմները և հայերը, Երևան, 2014, էջ 464 (մանրամասն տե՛ս գլուխ չորրորդ):

[2] Տե՛ս **Մելքոնյան Էդ.**, Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Երևան, 2005, էջ 53-54:

[3] «Հայրենիք», 1912, թիվ 23 (685), էջ 4:

[4] Տե՛ս **Tracy La Piere R.**, նշվ. աշխ., էջ 162:

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 161, 162:

լիորեն աճել էր հարավային (Լոս Անջելես) և հյուսիսային (Սան Ֆրանցիսկո, Սակրամենտո) շրջանների հայության թիվը[1]:

ԱՂՅՈՒՍԱԿ I

ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ԿԱԼԻՖՈՌՆԻԱՅՈՒՄ 1912 Թ.			
Ֆրեզնո և շրջակայք	4500	Լոս Անջելես և շրջակայք	1100
Ֆաուլեր և շրջակայք	500	Սան Ֆրանցիսկո և շրջակայք	250
Եդեմ	300	Սակրամենտո	50
Թուլարի	75	Այլ շրջաններ	150

1914 թ. օգոստոսին սկսված Առաջին համաշխարհային պատերազմի տարիները ճակատագրական և անդառնալի հետևանքներ ունեցան հայ ժողովրդի համար. նախ և առաջ՝ ավելի քան 1.5 մլն հայերի ցեղասպանությունը Արևմտյան Հայաստանում, Հայկական Կիլիկիայում և Օսմանյան կայսրության այլ շրջաններում: Պատերազմի տարիներին գրեթե անհնար դարձավ հայերի արտագաղթը երկրից: 1915 թվականից մինչև 1919 թ. Փարիզի հաշտության կոնֆերանսը ԱՄՆ ներգաղթեց 3620 հայ[2]: Կարելի է ենթադրել, որ վերջիններիս մի մասը հաստատվել էր հենց Կալիֆոռնիայում, սակայն նահանգի հայ բնակչության աճը այդ տարիներին տեղի ունեցավ հիմնականում ԱՄՆ-ի արևելյան նահանգներից եկած վերաբնակիչների հաշվին: «Վերջերս,– գրում էր Նյու Յորքում հրատարակվող «Կոչնակ»-ը,– մեծ շարժում մը սկսած է սա կողմերէ դէպի Քալիֆօրնիա գաղթելու: Թէ Նիւ Եորքէն եւ թէ արեւելքի շատ մը քաղաքներէն բաւական թուով ընտանիքներ գացած են և արդեն շատեր ալ երթալ կը խորհին»[3]:

Լա Պիեռը նշում է, որ 1920 թ. պաշտոնական մարդահամարը Կալիֆոռնիայում հաշվում էր 10 112 հայ, որից 962-ը կենտրոնացած էր Լոս Անջելեսում, 297-ը՝ Սան Ֆրանցիսկոյում, իսկ մնացած 8862-ը՝ Ֆրեզնոյի շրջանում[4]:

Պատերազմից հետո եկողները իրենց նախորդների նման կարծես ձգտում էին օր առաջ օգտվել Կալիֆոռնիայի ընձեռած հնարավորություններից, զբաղվել այգեգործությամբ, որը դեռ շարունակում էր դիտվել որպես բարեկեցության երաշխիք: Պատահական չէ, որ 1920 թ. Ֆրեզնոյի շրջանի հայ բնակչության 55%-ը ապրում էր գյուղական շրջաններում (rural districts)՝

---

[1] Տե՛ս **Մուշեղ Եպիսկոպոս**, նշվ. աշխ., էջ 75:

[2] Տե՛ս **Minasian Ed**., The Armenian Immigrant Tide: From the Great War to the Great Depression // «Recent Studies in Modern Armenian History», Cambridge, Mass., 1972, p. 109:

[3] «Կոչնակ», 1918, թիվ 28, էջ 2315-2316: Տե՛ս նաև **Wallis W. D**., նշվ. աշխ., էջ 37:

[4] Տե՛ս **Tracy La Piere R**., նշվ. աշխ., էջ 163: Իրականում այդ թվերի համազումարը կազմում է 10121, հավանաբար բնագրային վրիպակ է:

քաղաքից դուրս, և որ, օրինակ, վեց տարվա ընթացքում (1912-1918) Ֆաուլերի հայության թիվը 500-ից հասել էր 1000-ի, իսկ Թուլարիինը (Վայսալիայի հետ միասին)՝ 75-ից 400-ի[1]:

Առաջին աշխարհամարտից հետո Ամերիկայի Միացյալ Նահանգներ հայության զանգվածային ներգաղթ սկսվեց 1920 թ.: Մեկ տարում այստեղ հանգրվանեցին 10 212 վտարանդի հայեր՝ ամենամեծ թիվը նախորդ բոլոր տարիների համեմատ[2]: Սրանից, սակայն, դեռևս չփոխվեց հայ բնակչության պատկերը Կալիֆոռնիայում: Խնդիրն այն էր, որ սկզբնապես ԱՄՆ-ի արևելյան նահանգներում ապաստանած այս վտարանդի հայերը նույնիսկ ցանկության դեպքում ի վիճակի չէին տեղափոխվել երկրի արևմուտք՝ նյութական ծանր կացության պատճառով:

Այնուամենայնիվ, ԱՄՆ-ի կառավարությունը շուտով պետք է ընդուներ ներգաղթը սահմանափակող օրենքներ, որոնք երկրի ազգային քաղաքականության և հակագաղթականական շարժման հետևանք էին, և որոնց պատճառով հայության մուտքը այդտեղ լրջորեն խոչընդոտվելու էր:

Այսպես, 1921 թ. մայիսի 19-ին ԱՄՆ-ի Կոնգրեսը վավերացնում է «Արտակարգ քվոտայի օրենք»-ը (Emergency Quota Act, հայտնի է նաև Emergency Immigration Act of 1921, Immigration Restriction Act of 1921 և այլ անվանումներով), ըստ որի՝ գաղթականների թվաքանակը չէր կարող գերազանցել ԱՄՆ-ի նույն ազգության բնակիչների երեք տոկոսը՝ ըստ 1910 թ. մարդահամարի: Օրենքը չէր տարածվում Կանադայի, Կուբայի, Կենտրոնական ու Հարավային Ամերիկայի բնակիչների, այդ երկրներում մեկ տարուց ավելի (1922 թ. մայիսից՝ հինգ տարուց ավելի) ապրած օտարականների, ԱՄՆ-ի հետ ներգաղթի վերաբերյալ երկկողմ համաձայնագրեր ունեցող երկրների բնակիչների վրա և այլն[3]:

Նշված օրենքի կիրառումը որոշ դեպքերում հայերի համար նաև ողբերգական հետևանքներ ունեցավ: Նույն 1921 թ. սեպտեմբերի 16-ին, ինչպես հաղորդում է «Ասպարեզ»-ը, Հայ գաղթականների օգնության կոմիտեի (Armenian Immigrant Welfare Society) գլխավոր քարտուղար Ջորջ Հ. Թոփաքյանը «Նյու Յորք Թայմզ» թերթում հրապարակել էր գաղթականների հարցերով զբաղվող «Էլիս Այլենդ» ներգաղթի կայանում 300 հայերի մուտքը երկիր արգելելու դեպքի մասին. «300 հայեր, մեծաւ մասամբ կիներ ու երեխաներ, որոնք կուգան իրենց ազգականներուն և մատաղատի կիներ ու օրիորդներ

---

[1] Տե՛ս **Tracy La Piere R.**, նշվ. աշխ., էջ 167:

[2] Տե՛ս **Mirak R.**, Armenians, Harvard Encyclopedia of American Ethnic groups, Cambridge, London, 1981, p. 139:

[3] Տե՛ս **Մատթէոսեան Վ.**, Հարաւային կողմն աշխարհի. հայերը Լատին Ամերիկայի մէջ սկիզբէն մինչեւ 1950, Անթիլիաս, 2005, էջ 94, US immigration legislation online. 1921 Emergency Quota Law // http://library.uwb.edu/Static/USimmigration/1921_emergency_quota_law.html (մուտք՝ 02.07.2019):

որոնք կուգան ամուսնանալու համար, Էլլիս Այլընտի մէջ վար դրուած են ճամբուելու համար… Այս հայերը թիւրք իշխանութենէն փախստականներ են… Ասոնք կը յայտարարեն թէ աւելի կ'ընտրեն անձնասպան ըլլալ քան թէ վերադառնալ Թիւրքիա: Չորս մանկամարդ հայուհիներ Էլլիս Այլընտի մէջ այս տարի ծովը նետուած եւ խեղդուած են»[1]: Այս հայերի ներգաղթը ԱՄՆ արգելվել էր այն պատճառով, որ նրանք թուրքահպատակ էին, իսկ Թուրքիայի մասնաբաժինը այդ ամսին արդեն լրացել էր: Ի վերջո 20 օր Էլիս Այլենդում պահելուց հետո վերոհիշյալ հայերին ժամանակավոր հրամանով թույլատրում են մուտք գործել երկիր, մինչև խնդիրը վերստին քննարկվեր:

1920-ական թթ. ներգաղթի կայանում հայերի ձերբակալումը դարձել էր սովորական երևույթ: Այս խնդրով մտահոգ ամերիկացի որոշ պաշտոնյաներ նույնիսկ օրինագծեր էին կազմում և ներկայացնում ներգաղթի հանձնաժողովին՝ խնդրելով արտոնել հազարավոր հայ որբերի ու փախստականների մուտքը ԱՄՆ, սակայն դրանք որպես կանոն մերժվում էին: Փորձելով որևէ կերպ օգնել նրանց՝ ամերիկյան բողոքական միսիոներները և Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույցի (Near East Relief, 1919) անդամները, ինչպես մինչ այդ, հաճախ որդեգրում էին հայ որբերին կամ իրենց ազգանունն էին տալիս նրանց[2]:

Այսպիսով, ըստ ընդունված տեսակետի՝ մինչև 1924 թ. Միացյալ Նահանգներ կարողացան ներգաղթել շուրջ 20 000 վտարանդի հայեր[3], թեև վերջին տարիների ուսումնասիրությունները վկայում են, որ ԱՄՆ մուտք գործած հայերի թիվը եղել է կիսով չափ ավելի՝ մոտ 31 000[4]:

1924 թ. մայիսի 26-ին Կոնգրեսը ընդունում է «Արտակարգ քվոտայի օրենք»-ին փոխարինած «Ազգային ակունքների օրենքը» (National Origins Act, հայտնի է նաև The Immigration Act of 1924 կամ The Johnson-Reed Act անվանումներով), որի համաձայն գաղթականների թվաքանակը չէր կարող գերազանցել ԱՄՆ-ի բնակիչների նույն ազգության երկու տոկոսը՝ ըստ 1890 թ. մարդահամարի (1929 թվականից՝ ըստ 1920 թ. մարդահամարի): Նախապատվություն էր տրվում հատկապես Հյուսիսարևմտյան Եվրոպայի երկրներից ներգաղթել ցանկացողներին, և գրեթե բացառվում էր մուտքը Աֆրիկայի և Ասիայի երկրներից, այդ թվում՝ նաև հայերի համար[5]: Բացառություն էին ԱՄՆ-ի քաղաքացիություն ունեցողների կանայք և տասնութ տարեկանը

---

[1] «Ասպարէզ», 1921, թիվ 787, էջ 2:

[2] Մանրամասն տե՛ս **Minasian Ed**., նշվ. աշխ., էջ 106-108: Նպաստամատույցի մասին տե՛ս **Barton J**., Story of Near East Relief, New York, 1930, Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույցի պատմությունը // http://www.genocide-museum.am/arm/online_exhibition_10.php (մուտք՝ 16.08.2019), **Մելքոնյան Էդ**., նշվ. աշխ., էջ 142-147:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 111, **Mirak R**., Armenians, p. 139:

[4] Տե՛ս **Powell J**., Encyclopedia of North America Immigration (Facts on File Library of American History), New York, 2005, p. 18:

[5] Տե՛ս **Frank J. C., Salvatore J. L**., The Peripherical Americans, Malabar, Florida, 1984, p. 217-223:

չլրացած նրանց երեխաները, Արևմտյան կիսագնդի երկրների բնակիչները, գիտության ոլորտի անձինք և Միացյալ Նահանգներում ուսանելու «իրական» մտադրությամբ եկող մինչև տասնհինգ տարեկանները[1]:

Արդեն նշվեց, որ հայ որբերին ու փախստականներին ներգաղթի՝ օրենսդրությամբ սահմանված քվոտաներից ազատելու վերաբերյալ օրինագծերը չէին հաստատվում: Սակայն սակավաթիվ հայ փախստականների հաջողվեց ներգաղթել «Նանսենյան անձնագրերով»[2]: Ինչպես հայտնի է, 1924 թ. հուլիսի 12-ին Ազգերի լիգայի որոշմամբ Հայոց ցեղասպանությունից փրկված շուրջ 320 000 վտարանդի հայերի շնորհվեցին «Նանսենյան անձնագրեր», որոնց միջոցով նրանք կարողացան ապաստանել ԱՄՆ-ում, Հարավային Ամերիկայում ու Եվրոպայում[3]:

1924 թ. «Ազգային ակունքների օրենքը» գործեց մինչև 1965 թ.՝ էապես կրճատելով հայության ներգաղթը ԱՄՆ:

Ըստ Էդ. Մինասյանի ուսումնասիրության՝ 1930-ական թվականներին ԱՄՆ-ում հայ ներգաղթողների թիվը ընդամենը 2419 էր[4]: Սրանց թվում էին նաև Հայոց ցեղասպանությունից հետո ողջ մնացած հայերը, որոնք, ձգտելով օր առաջ հեռանալ քեմալական Թուրքիայից, 1923-1924 թվականներից արտագաղթել էին Սիրիա, Լիբանան, Եգիպտոս, Հունաստան և այլուր, որտեղից էլ նրանց մի մասին հաջողվել էր ներգաղթել Միացյալ Նահանգներ: Ըստ ամենայնի՝ թե՛ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և թե՛ 1924 թ. ներգաղթի օրենքի ընդունումից հետո Կալիֆոռնիայի հայության թվաքանակը ստվարացել է երկրի արևելյան նահանգներից եկողների հաշվին:

1920-ական թթ. կեսերից սկսած՝ Կալիֆոռնիայում տեղի ունեցան կարևոր տեղաշարժեր 1922 թ. Սան Վոքինում սկսած տնտեսական ճգնաժամի պատճառով, որը որոշ ընդհատումներով տևեց մինչև 1930-ական թթ. վերջը: Ճգնաժամից մեծապես տուժեց նախ և առաջ գյուղատնտեսության ոլորտը, ուստի Սան Վոքին հովտում գտնվող Ֆրեզնո, Թուլարի, Ստանիսլաուս, Քինգս և այլ շրջանների հողագործ հայությունը հայտնվեց ծանր վիճակում: Աստիճանաբար սկսվում էր տեղափոխություն դեպի նահանգի հարավային և հյուսիսային շրջաններ: 1923 թ. «Ասպարեզ»-ը գրում էր, որ բոլորը խուճապի էին մատնված: Նրանք, ովքեր կարծում էին՝ Ֆրեզնոն ապագա չունի, փորձում էին վաճառել իրենց հողերը ամեն գնով: Ճգնաժամից վնասներ էին կրել նաև խանութպանները, արհեստավորներն ու առևտրականները.

---

[1] Տե՛ս US immigration legislation online. 1924 Immigration Act // http://library.uwb.edu/static/usimmigration/1924_immigration_act.html (մուտք՝ 15.08.2019):

[2] Տե՛ս **Mirak R.**, Armenians, p. 139:

[3] Տե՛ս Ազգերի լիգայի փաստաթղթերն ապացուցում են Հայոց ցեղասպանության փաստը // http://www.genocide-museum.am/arm/g_brief_09.php (մուտք՝ 06.08.2019):

[4] Տե՛ս **Minasian Ed.**, նշվ. աշխ., էջ 112:

նրանք թողնում էին իրենց աշխատանքն ու ընտանիքներով հեռանում[1]: Այլ կերպ ասած՝ Ֆրեզնոյի շրջանը դադարել էր հայերի համար «գայթակղիչ» հանգրվան լինելուց: Օրինակ՝ Եդեմում 1930-ական թթ. սկզբներին, ինչպես նշվեց, մնացել էր ընդամենը տասը ընտանիք, Սելմայի հայության թիվը 500-ից դարձել էր 100-150, Քինգսբուրգինը՝ 600-ից 150[2], և այդպես շարունակ: Սան Վոքինի գյուղական ավաններից հեռացող հայությունը հաստատվում էր կա՛մ Ֆրեզնո քաղաքում, կա՛մ ավելի հաճախ՝ Լոս Անջելեսում և Սան Ֆրանցիսկոյում, որոնք արդյունաբերական և առևտրական արագ զարգացող քաղաքներ էին՝ նոր աշխատատեղերով ու հնարավորություններով:

ԱՄՆ-ի հերթական՝ 1930 թ. մարդահամարի տվյալներով՝ երկրում հայերենը որպես մայրենի լեզու ճանաչել էր 51 741, իսկ Կալիֆոռնիայում 12 379 մարդ[3]: Հայկական սկզբնաղբյուրների տվյալները այլ են: Այսպես, ըստ Ֆրեզնոյի «Փարոս» ամսաթերթի տեղեկությունների՝ դեռևս 1927 թ. Կալիֆոռնիայում հայազգի բնակչության թվաքանակը հասնում էր շուրջ 16 000-ի[4]: Առավել կարևոր է այն, որ Չարլզ Մահաքյանը, իր դոկտորական ատենախոսությունում 1930 թ. մարդահամարի տվյալները համարելով ոչ ամբողջական, բերում է նաև հայկական սկզբնաղբյուրների տվյալները՝ շուրջ 18 000. այս թիվը, որը գրեթե չփոխվեց մինչև 1930-ականների վերջը, հետագայում ամրագրվեց այլ մասնագետների կողմից ևս[5]: Չ. Մահաքյանը բերում է նաև հայազգի բնակչության տեղաբաշխման վերաբերյալ մարդահամարի տվյալները (տե՛ս աղյուսակ II)[6], և որքան էլ դրանք տարբերվեն հայկական սկզբնաղբյուրների տվյալներից, այդուհանդերձ հստակ պատկերացում են տալիս 1922 թ. սկսած տնտեսական ճգնաժամի հետևանքով նահանգում հայերի տեղաբաշխման փոփոխության վերաբերյալ:

ԱՂՅՈՒՍԱԿ II

ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹԻՎԸ ԿԱԼԻՖՈՌՆԻԱՅՈՒՄ 1930 Թ.			
Լոս Անջելեսի շրջան	4768	Փասադինա	212
Լոս Անջելես քաղաք	3547	Սակրամենտո	201
Ֆրեզնոյի շրջան	4389	Բերկլի	84
Ֆրեզնո քաղաք	1530	Բելվեդիր	53
Սան Ֆրանցիսկո	928	Լոնգ Բիչ	48
Օքլենդ	373	Գլենդել	45

[1] Տե՛ս «Ասպարէզ», 1923, թիվ 1026, էջ 1:

[2] Տե՛ս «Ոսկեմատեան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան», էջ 390, 396, 398:

[3] Տե՛ս Mother Tongue of the Foreign-Born Population // https://www.census.gov/population/www/documentation/twps0029/tab06.html (մուտք՝ 14.08.2019), **Mahakian Ch**., նշվ. աշխ., էջ 14:

[4] Տե՛ս «Փարոս», 1927, թիվ 8, էջ 187:

[5] Տե՛ս **Mirak R**., Armenians, p. 141:

[6] Տե՛ս **Mahakian Ch**., նշվ. աշխ., էջ 14, 15, 19:

Համեմատելով այս թվերը 1920 թ. մարդահամարի տվյալների հետ՝ ակնհայտ են դառնում մեկ տասնամյակի ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները: Եթե 1920 թ. մարդահամարի տվյալներով Ֆրեզնոյի շրջանում բնակվում էր 8862 հայ, ապա 1930-ին՝ 4398, այսինքն՝ երկու անգամ պակաս: Հակառակ պատկերն է Լոս Անջելեսի շրջանում, որտեղ հայերի թվաքանակը կտրուկ աճել էր՝ հասնելով 4768-ի. սրանից ավելի քան երկու երրորդը՝ 3547 մարդ, ապրում էր Լոս Անջելես քաղաքում, մինչդեռ 1920 թ. հայերի թիվն այստեղ ընդամենը 962 էր: Նույնպիսին է նաև Սան Ֆրանցիսկոյի օրինակը, որի հայ բնակչությունը աճել էր գրեթե երեք անգամ՝ 297-ից հասնելով 928-ի: Աճում է նաև հյուսիսային և հարավային շրջանների՝ մինչ այդ սակավաթիվ հայ բնակչություն ունեցող քաղաքների հայության թիվը: Օրինակ՝ եթե 1910-ական թթ. սկզբին Սաքրամենտոյում բնակվում էր ընդամենը 50 հայ, ապա 1930 թ. նրանց թիվը հասնում է շուրջ 200-ի: Բացի այդ՝ նահանգի հյուսիսային և հարավային շրջաններում, ըստ էության, առաջին անգամ (1930) հայտնվում են հայաբնակ քաղաքներ ու ավաններ՝ Բերկլի, Բելվեդիր, Լոնգ Բիչ, Գլենդել և այլն: Այլ կերպ ասած՝ արդեն 1930-ականների սկզբին հայակենտրոն Ֆրեզնոյի շրջանը իր դիրքը աստիճանաբար զիջում է Լոս Անջելեսի շրջանին: Բայց միայն 1960-1970-ական թվականներից է (երբ սկսվեց մեծ թվով հայերի՝ մինչ այժմ շարունակվող ներգաղթը Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներից, ապա նաև Հայաստանից), որ Կալիֆոռնիայի, ինչո՞ւ չէ, նաև ԱՄՆ-ի հայության հասարակական, հոգևոր ու մշակութային կենտրոնը դարձավ մեծ թափով զարգացող Լոս Անջելես քաղաքային ագլոմերացիան, որի կազմում է նաև Գլենդելը. 2010 թ. մարդահամարի տվյալներով՝ վերջինիս բնակչության 34.1 տոկոսը՝ 65 434-ը, հայեր են[1], մինչդեռ 1930-ական թթ. Գլենդելում բնակվում էր ընդամենը 40-50 հայ:

Այսպիսով, 1880-ական թվականներից մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը հայությունը Կալիֆոռնիա տեղափոխվեց առավելապես ԱՄՆ-ի արևելքից, Արևմտյան Հայաստանից, մասամբ նաև՝ Արևելյան Հայաստանից, իսկ Առաջին համաշխարհային պատերազմից հետո արդեն՝ որպես վտարանդիներ՝ աշխարհի տարբեր երկրներից: Նրանք ի սկզբանե բնակվեցին կենտրոնական Կալիֆոռնիայի Սան Վոքին հովտում՝ Ֆրեզնոյի, Թուլարիի, Ստանիսլաուսի և այլ շրջաններում, սակայն 1922 թ. սկսված տնտեսական ճգնաժամի տարիներին տեղի հայության մի զգալի մասը տեղափոխվեց դեպի նահանգի հյուսիսային և հարավային շրջաններ՝ Սան Ֆրանցիսկո, Լոս Անջելես և այլուր:

---

[1] Տե՛ս 2006-2010 American Community Survey Selected Population Tables. Glendale City, California, Armenian // http://factfinder.census.gov/faces/tableservices/jsf/pages/productview.xhtml?src=bKmK (մուտք՝ 15.07.2019):

Асмик Есаян – ***Армяне в Калифорнии: волны иммиграции и переселения с 1880-х по 1930-ые годы***

Армяне, переехавшие в Калифорнию с 1880-х годов до Второй мировой войны, в основном были из восточной части Соединенных Штатов, Западной Армении и частично из Восточной Армении, а после Первой мировой войны – из разных стран мира как изгнанники. Первоначально они жили в долине Сан-Хоакин в центральной Калифорнии: во Фресно, в Туларии, в Станислаусе и в других регионах. Однако в 1920-х гг. в Калифорнии произошли значительные переселения из-за экономической депрессии. Большая часть местных армян переехала в северную и южную части штата – Сан-Франциско, Лос-Анджелес и т. д.

Hasmik Yesayan – ***Armenians in California: the Waves of Immigration and Population Movements from 1880ss to 1930ss***

From the 1880s until World War II, Armenians moved to California mostly from the eastern United States, Western Armenia and partly from Eastern Armenia. After World War I they moved to California from numerous countries as exiles. Armenians originally lived in the San Joaquin Valley of Central California, especially in Fresno, Tulare, Stanislaus, and other counties. However, in the 1920s significant population movements occurred in California because of economic depression. The local Armenians moved to the northern and southern parts of the state – San Francisco, Los Angeles, and elsewhere in large numbers.

Ներկայացվել է 04.09.2019
Գրախոսվել է 29.10.2019
Ընդունվել է տպագրության 05.11.2019